Վանո Սիրադեղյան

Սիրելու տարիք

Վ.Տղան գիտեր, որ դժվարը կռվին նախորդող րոպեներն են: Սաստկացող թշնամանքի մթնոլորտին նրա սիրտը չէր ընտելանում:
Թշնամանքի թույնը կաթում էր անքեն սրտի նուրբ թաղանթին եւ սրտխփոցը դղրդում էր ականջներում: Բայց դա անցնում էր առաջին, երկրորդ, երրորդ հարվածից հետո . ստանալուց կամ հասցնելուց:
Նա քաջ գիտեր առաջին զարկի առավելությունը, բայց չէր կարող առանց ուղեղի մթանգնումի մարդու աչքերին նայել ու խփել եւ, որպես կանոն, առաջինը խփում էին իրեն: Դա այնքան սարսափելի չէր: Վատը կռվից մնացող քենն էր: Այդ ոխակալ անվստահության տեւողությանը նրա սիրտը չէր դիմանում: Ելքը այն էր, որ հակակշիռ թշնամանքով մտասեւեռվեր, թշնամանքի օդով սնվելով՝ իր կորովը տեղը պահեր . . . Բայց դա ի՞նչ կյանք էր: Շուրջբոլորը այնքա՛ն ներդաշնակ ու կոպտությունից շեղող բան կար, տղայի միտքը հափշտակող այնքա՛ն գաղտնիք կար ծալ-ծալ բացվող աշխարհի վրա, եւ նա այնքան ցրված էր լինում, այնքան անպատրաստ, զգոնությունը կորցրած այնքան, որ այս անգամ էլ առաջինը խփում էին իրեն: Եվ շատ դեպքերում պատասխան չէին ստանում:
Հիմա այդ կյանքը անցած շրջան էր: Եթե առաջ կարելի էր անձնական վիրավորվածությանը կարեւորություն այնքան էլ չտալ, կարելի էր մի բան էլ կուլ տալ, — հիմա ուրիշ էր: Իր արժանապատվությունը այսուհետեւ իրենից բացի վերաբերելու է նաեւ մեկին: Հարաբերությունները պարզելու համար ընդամենը երեք-չորս օր ժամանակ կար: Օր կորցնել չէր կարելի: Մինչեւ իր աղջկա գալը ինքը պիտի Մեծառեխին կա՛մ ծեծած լինի, կա՛մ աչքի փուշը կոտրած լինի: Իր աղջկան շենում ծուռ նայող չպիտի լինի: Իր աղջկա ներկայությամբ իրեն բան ասող չպիտի լինի:

«Վերջ, — ասաց տղան՝ հայելու առաջ դաստակը վիրակապով փաթաթելիս, — խելոք ենք եղել, ծեծ ենք կերել, ծաղր ենք հանդուրժել — անցած լինի: Ձեր արածը ձեզ հալալ լինի — այսօրվանից՝ վերջ: Բանաստեղծություն-բան գրելը հետաձգվում է անորոշ ժամանակով»:

Նա դժվար հասավ այս որոշմանը: Երբ մտածում էր աղջկա մասին, համակվում էր վճռականությամբ, բայց վճռականությունից բան չէր մնում աղջիկը մտքում չեղած ժամանակ: Իսկ երբ վերստին մտաբերում էր, հարկ էր լինում ոգու կորովը շնչի բերել մեռյալ կետից: Բայց ամառային արձակուրդները մոտենում էին, ամեն ամառ հովեկ աղջիկը արդեն մտքում կար անբացակա եւ մտադրությունը դարձավ վճիռ:

Այնինչ մարմնով պատրաստվում էր գարնան սկզբից: Ակումբի բակից տուն էր քարշ տվել երկու փթանոց գիրերից մեկը ու կպել դրան . . . Նրա մարզվելը սկզբում, իրոք, նման էր կպչել-մնալու: Մետաղը հաստոտ ըմբիշի նման իրար չէր գալիս, տղան թպրտում էր ու պարում էր դրա շուրջը, երկաթը տղային ծալում-ծալծլում-հակում էր հողին, ասես ուզում էր կլանել իր պաղ, հոծ ընդերքը: Տղան գալարվում, բայց պոկ չէր գալիս: Երկու ելք կար . կամ պիտի ինքը երկաթին հլու՝ գետինը մտներ, կամ՝ երկաթը գետնից կտրեր: Երրորդը չկար: Թողնել գնալը բացառված էր: Տղան ասում էր ինքն իրեն . «Ես՝ չէ, երկաթն է ձեռս բռնել, մինչեւ գետնից չկտրվի՝ բաց չի թողնելու: Պիտի կտրվի»:

Նա շատ լավ գիտեր, որ մնացած մի քանի ամսում ուժից չի տրաքվելու, բայց որ երկաթը գլխից վեր հանելու ձեւը պիտի գտնվի՝ դա անկասկած էր: Այն օրը, երբ ծանրությունը գլխից վեր հանես, իր գործելու ժամն էր լինելու: Ծրագրված էր երկու կոիվ: Նույնիսկ երեքը: Քանիսը որ անհրաժեշտ եղավ:

Հիմա կանգնած է զգեստապահարանի հայելու առաջ, հագած ունի անթեւ շապիկ, բազուկների մկանունքը նորվա ջանքից դեռ փքված են, դաստակը՝ պնդված, եւ կենտրոնացած պատրաստվում է կռվի գնալու մի ոհմակի դեմ եւ հետը գնացող մեկը չունի՝ թիկունքին կանգնի: Եղբայրը մեծ է, ընկերների ոչ բարով թիկունքը ինքն է, — այսպես անթիկունք գնալու է նրանց թաղը, ովքեր կռվում են միշտ ոհմակով, միշտ՝ թաղովի, միշտ՝ գեղովի — նույնիսկ մեկի դեմ:

Տղան անուշ մի թախիծով խղճում էր իրեն: Կռվի մասին մտածում էր որպես եղած բանի, իրեն տեսնում էր ջարդված, բայց աղջկա աչքերի մեջ շիտակ նայելիս: